



ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

« » 200 թ.

..... /

ՀՐԱՍԱՆ N 222-Լ

24-րդ դեկտեմբերի, 2009թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ, «ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ», «ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ», «ԿՈՍԻՏԱՍ»,
«ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ» ՄԵԴԱԼՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՄԵԴԱԼՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության սփյուռքի
նախարարության կանոնադրության 13-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՍԱՅՈՒՄԵՄ

1. Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման տարրեր բնագավառներում ծրագրեր իրականացնելու, դրանց աջակցելու, գործակցության հետագա զարգացմանը նպաստելու, հայապահպանությանն օժանդակելու գործում անհատներին և կազմակերպություններին խրախուսելու նպատակով՝ ստեղծել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության մեդալներ:
2. Հաստատել մեդալների ձևերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ